ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԳԱԼՋՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Գալջյան,

ի պատասխան Ձեր 23.11.2023թ. գրության՝ Մարինե Կոստանյանին և Անուշ Ավետիսյանին բնակարաններ հատկացնելու վերաբերյալ, տեղեկացվում է, որ Երևան քաղաքում առկա քանդման ենթակա 4-րդ կարգի վթարային հանրակացարանային շենքերի բնակիչների վերաբնակեցումն իրականացվում է ՀՀ կառավարության 2009 թվականի փետրվարի 5-ի հ.172-Ն որոշմամբ հաստատված կարգի և Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի հ.694-Ն որոշման հիման վրա:

Արցախի 4-րդ նրբ. հ.8 և հ.10 շենքերում իրականացված ներքին չափագրման, բնակարանների և բնակիչների հաշվառման աշխատանքների իրականացման ընթացքում համապատասխանաբար հ.101 և հ.114 համարակալումներով բնակարաններ շենքերի ծավալներում չեն հայտնաբերվել և չեն հաշվառվել: Նշված տարածքները հանդիսանում են վերոնշյալ հանրակացարանային շենքերին հարակից, շենքերի ծավալից դուրս գտնվող շինություններ և դրանց 4-րդ կարգի վթարային լինելու վերաբերյալ տեղեկատվություն Երևանի քաղաքապետարանում առկա չէ:

Միաժամանակ տեղեկացվում է, որ վերոնշյալ իրավական ակտերով վթարային հանրակացարանային շենքերի ծավալից դուրս գտնվող տարածքների բնակիչների վերաբնակեցման դրույթ նախատեսված չէ:

Տեղեկացվում է նաև, որ Արցախի 4-րդ նրբ. հ.8 հանրակացարանային շենքն ամբողջությամբ վերաբնակեցվել է, իսկ հ.10 հանրակացարանային շենքի բնակիչների վերաբնակեցման գործընթացը դեռևս ընթացքի մեջ է:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ